# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար A4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 12.10.2022թ. N 478/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.10.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Հ.Վանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

## Օրակարգ

## Հայտերի բացման և գնահատման մասին

### 1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Տ.Պետրոսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Սմարթլայն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Վարդանանց-110)
2" «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Արշակունյաց պողոտա-2, գրասենյակ-525)
3"«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Սմբատ Զորավարի-11/1)

### 2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ապրանքի անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | նախահաշվայ ընդհանուր գի ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «Սմարթլայն» ՍՊԸ | Թուղթ A4 ֆորմատի | 22 211 000 | 20% | 26 653 200 | 28 105 00( |
| 2 | | «Փեյփր Հաուս» ՍՊԸ | | 22 444 800 | 20% | 26 933 760 | |
| 3 | | «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 23 420 000 | 20% | 28 104 000 | |

### 3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

### 4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

**5. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Սմարթլայն» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Սմարթլայն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Սմարթլայն» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Սմարթլայն» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ.Պետրոսյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Հ.Վանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան